

պիտի ասել, որ հայ կամ ընդհանրապես քրիստոնեայ երեխաներին թրջացնելու քաղաքականութիւնը դեռ գալիս է ենիչերիների օրերից, որ շեշտուած կիրառութեամբ կրկնուեց 1894-96-ի ջարդերին: 1917-ին հրատարակուած Ջոզեֆ Յաքինգի *The Path of Glory* (Փառքի ճամբան), ինչպէս նաեւ Սեւդա Սեւանի «Ռոդոստո, Ռոդոստո» վեպերը վիպականացումն են այդ իրողութեան:

Եաւջընը գրում է ջարդից ազատուած եւ իրենց ծննդավայրը վերադարձած հայերի մասին -- ինչպէս օրինակ՝ Ամասիացի Օհան Էօզանթն ու մայրը, Գարամանցի Սարգիս վարպետն ու ընտանիքը -- եւ տեղացիների հալածանքը, թշնամութիւնն ու խտրականութիւնը նրանց դէմ, որ ի վերջոյ պարտադրել էր նրանց ու նրանց պէս հարիւրաւորներին լքել ծննդավայրը: Այդ բոլորով հանդերձ, Օհանը Թուրքիան իր հայրենիքն էր համարում, «Մարդկանց միջեւ խտրութիւն մի՛ դնէք... Մարդիկը ըստ իրենց կրօնքներուն մի՛ բաժնէք: Թուրքիան բոլորիս է: Թուրքիան մի՛ ոչնչացնէք»: Թուրքիան իր հայրենիքն է, բայց ինքը հայ է, հայ էլ կը մեռնի, «Որմէ՞ պիտի քաշուիմ այլեւս: Լռեցիք, լռեցիք, ի՞նչ եղաւ մինչեւ այսօր»:

Օհանի զգացումները շատերն են կիսում: Թուրքիայում ծնուած ու մեծացած հայի համար Թուրքիայից դուրս հայրենիք չկայ: Այս իմաստով, որքան յատկանշական է Յրանտ Դինքի վերջին խմբագրականը «Ակօս»ի Յունուար 10, 2007-ի համարում տպագրուած, որ խօսում է այն մասին թէ հայը չի լքի Թուրքիան եւ եթէ պարտադրուի լքել, 1915-ի իր նախնիների պէս տառապանքով պիտի քայլի: Պիտի զգայ նոյն ցաւն ու մղձաւանջը: Պիտի քայլի ուր իր ոտքերն են տանում՝ ո՛չ իր սիրտը: